

ՆՈՐԱՎՈՒՏ ԲՎՈԵՐԸ ՍԵԲԵՇՈՒ «ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՄԵԶ

Գ. Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

VII դարում տեղի ունեցած պատմահասարակական բազմաթիվ իրադարձություններ, ինչպիսիք են պատերազմները պարսիկների ու բյուզանդացիների միջև, արաբների առաջին արշավանքները Հայաստան, Պարսկաստան ու Բյուզանդիա, իրենց արտացոլումն են գտել VII դարի նշանավոր պատմիչ Սեբեոսի «Պատմութիւն» աշխատության մեջ: Այս տեսանկյունից այն ոչ միայն հայ, այլև պարսիկ, հույն, արար ժողովուրդների պատմության ուսումնափրության անփոխարինելի սկզբնաղբյուր է: Սեբեոսի «Պատմութեան» քննական բնագիրը՝ Գևորգ Արգարյանի աշխատափրությամբ, հրատարակվել է 1979 թ.: Սակայն մինչ այս այն արդեն չորս անգամ տպագրվել էր¹:

1842 թվականին է Հովհաննես Շահիսարունյանցը Էջմիածնի ձեռագրատանը հայտնաբերում Սեբեոսի «Պատմութիւնը»: Այս պատճառով էլ 1836-37 թթ. լույս տեսած «Նոր Հայկագեան բառարանի» հեղինակները այնտեղ չեն ներառել Սեբեոսի «Պատմութեան» բառապաշարը:

Ետղասական հայերենի ներկայացուցիչ Սեբեոսի «Պատմութեան» լեզվի բառապաշարը բազմաշերտ է: Սեբեոսը հայերենի բառակազմական մշտամնա օրենքների գործադրմամբ ստեղծել է տասնյակ նոր բառեր, կիրառել փոխառություն-նորաբանություններ:

Նորակազմությունները և փոխառությունները լեզվի հարստացման միջոց են: Այս եզրույթների սահմանները հստակեցնելու համար նշենք, որ նորակազմություններ են հայերենի բառակազմական ներքին կադապարներով ստեղծված նոր բառերը, իսկ փոխառություն-նորաբանություններ են այլ լեզուներից փոխառության ճանապարհով հայերենին անցած բառերը: Սակայն նկատենք, որ ամեն մի փոխառություն դեռ նորաբանություն չէ: Փոխառությունները, ըստ Էության, նորաբանություն կարելի է համարել միայն նոր իրողություններ ու հասկացություններ արտահայտելիս, մինչեւ կան փոխառություններ, որոնց արտահայտած բառիմաստների համարժեքները, նախքան փոխառված բառի ներմուծումը, արդեն լեզվում կան: Այս կարգի բառային միավորները կոչվում են օտարաբանություններ: Օրինակ. Սեբեոսը բերել է «հաւայ» արաբերեն փոխառությունը, որի արտահայտած իմաստի համարժեքները, նախքան փոխառված բառի ներմուծումը, արդեն լեզվում կան: Այս կարգի բառային միավորները կոչվում են օտարաբանություններ: Օրինակ. Սեբեոսը բերել է «հերակլ» արաբերեն փոխառությունը, որի արտահայտած իմաստի համարժեք բառային միավորները՝ «ցանկություն», «ձգտում», հայերենը վաղուց ունեցել է: Հետևաբար կառանձնացնենք այն նորաբանությունները, որոնց ստեղծումը կարելի է պայմանավորել նոր իրողությունների ու հասկացությունների առաջացմամբ, և այն փոխառությունները, որոնք միայն հնչյունական մակարդակում

¹ Տե՛ս «Պատմութիւն» Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլն», աշխ.՝ Թաղէոս Միհրդատեանի, Կոստանդնուպոլիս, 1851, «Պատմութիւն» Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլն և սկիզբն նորագիտ պատմութեան Աշխիքարայ Անեցոյ», աշխ.՝ Քերովք Պատկանեանի, Ս. Պետերբուրգ, 1879, «Պատմութիւն» Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլն», Թիֆլիս, 1912-1913 (նախորդի արտաստպությունն է՝ ավելացրած անվանացանկը), «Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն», չորրորդ տպագրութիւն, բարդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջարանի և ծանօթագրութեամբ ի ձեռն Ստ. Մալխասեանց, Եր., 1939:

նորաբանություն կլիմեն՝ որպես բառային նոր միավորներ: Պետք է նշել նաև, որ արդի լեզվաբանական աշխատություններում և դասագրքերում նորակազմությունները կամ նորաբանություններն ընկալվում են որպես լեզու մուտք գործած նոր բառեր, նոր արտահայտություններ, ինչպես նաև բառային նոր իմաստներ:

Մեր կատարած վիճակագրական հետազոտությունների շնորհիվ պարզել ենք, որ Սեբեոս շուրջ 75 նոր բառ է գործածել, և նրա լեզվի նորամուտ բառերը արտացոլվել են տարբեր ժամանակներում լույս տեսած գրաբարյան բառաշերտը ներկայացնող բացատրական բառարաններում: «Առձեռն բառարանում» բերվել է պատմիչի կիրառած 24 նորամուտ բառ³, Հրաչյա Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում»՝¹², Ստ. Մալիսայանի «Հայերեն բացատրական բառարանում»՝⁶, Ո. Ղազարյանի «Գրաբարի բառարանում»՝⁷, Ո. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Նորահայտ բառեր գրաբարում» գրքույկում՝¹¹, իսկ հետևյալ 13 բառամիավորները՝ «ասացելումն», «գաղթեցումն», «դարիքպետ», «կասրիական», «ճաշակող», «յուլարկումն», «շահրայնապետ», «շրջեկ», «պատճառումն», «պերոզական», «ոչտունական», «տարսունացի», «տեսանելումն», մենք ենք նկատել:

Ըստ իմաստային թեմատիկ բաժանման՝ Սեբեոսի ստեղծած ու գործածած նոր բառերը բազմաշերտ են: Հատկապես գերակշռում են ուազմական գործ, զինանուններ, պետական, վարչական կյանք, պաշտոն, տիտղոս, հասարակական հարաբերություններ, շարժում, ընթացք իմաստային խմբերը ներկայացնող բառային միավորները: Ստորև կրերենք յուրաքանչյուրն առանձին-առանձին:

ա) Ուազմական գործ և զինանուններ՝ **բահիկ** («պատերազմական զրահ»), **սրիան** («մանգաղ»), **պէշոպա** («առաջապահ գունդ»), **սնդր** («սաղավարտ»), **սակաւազար** («քիչ զորք ունեցող»):

բ) Պետական, վարչական կյանք, պաշտոն, տիտղոս՝ **դարիքպետ** («տիտղոս»)⁵, **պաղգոսապան** («զորավար»), **սպարա** («զինակիր»), **դրունգար** («քյուզանդական զինվորական աստիճան, վարչապետ»), **փայքար** («հարլկահավաքի օգնական»), **կանտիտատ** («պալատական պաշտոնյա»), **շահրայնապետ** («տիտղոս»)⁶,

²Տե՛ս **Էդ. Սղայան**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 69-170, **Գ. Սևակ**, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 142, **Ա. Սուրիհասյան**, Հընչյունաբանություն, Եր., 1982, էջ 201-206, **Լ. Եղիկյան**, Ոճագիտություն, Եր., 2003, էջ 134:

³Նկատենք, որ 1865թ. լույս տեսած «Առձեռն բառարանում» բերված մի շարք բառային միավորներ առաջինը հանդիպում ենք Սեբեոսի լեզվում, ուստի կարծիք է պնդել, որ «Առձեռնի» հեղինակներն իրենց բառարանում ընդգրկել են նաև Սեբեոսի բերած բառային նորամուծությունները: Սակայն միաժամանակ կարծիք է դիտարկել «Առձեռնի» հեղինակի՝ Սեբեոսի «Պատմութեանը» ծանոթ չինելու վարկածը ևս, քանի որ «Առձեռնում» բառահոդվածները բերվում են առանց աղբյուր նշելու:

⁴Դեռևս 1910 թվականին Էջմիածնի «Արարատ» ամսագրի երրորդ համարում Հ. Աճառյան անդրադարձել է Սեբեոսի ստեղծած նորակազմություններին ու բերած փոխառություններին՝ հետագայում այդ բառերը վկայելով նաև Արմատականում, այն է՝ **շագոյր** («պայտակալ»), **հաւայ** («ցանկություն, ձգուում»), **վերտնամուտ** («ամրագրահ»), **սրիան** («մանգաղ»), **յանկումուխ** («անվարժ ձի»):

⁵Այս բառի նշանակությունը հայտնի չէ, այն ընկալվել է որպես անձնանուն, սակայն բառավերջի «այես» մասնիկը պաշտոնի անվան տպագրություն է բողել, որի պատճառով էլ Հ. Հյուշշմանը դեռևս 1895թ. կարծիք է հայտնել, որ այն տիտղոսի անվանում է:

⁶Հ. Հյուշշմանի մեկնաբանմամբ՝ «այենապետ» բաղադրիչ ունեցող բարդ բառերը տիտղոսի անվանումներ են: Ըստ մեզ՝ Սեբեոսի բերած այս նոր բառը ոչ թե մարզպանի անուն է, այլ տիտղոսի: Ուստի այն նորակազմություն է: Հ. Հյուշշմանը նշյալ բառը ստուգաբանել է՝ «շահր» (նահանգ), «այեն» (կանոն), «պետ» (պետ):

անհրամանատար («հրամանատար չունեցող գործ»), **կուրատոր** («բյուզանդական բարձրաստիճան պաշտոնյա»):

զ) Հասարակական կյանք, տարածական հարաբերություններ՝ **նախանձաբեր** («վատ լուր բերող»), **տարսնացի** («Տարսունում ծնված և այնտեղ ապրող մարդ»), **շահրմար** («մարդահամար»), **վաճառ փոքր** («հասույթ»)⁷:

դ) Ֆիզիկական աշխարհ և տեղանք՝ **շրջեկ** («օրս կողմը սփոված»), **ձորաբերան** («ձորի բերանը, սկիզբը»), **կողածը** («վեռների կողեր»), **կիւնիկ** («կրկեսի հրապարակ, ուր գցում էին դատապարտյալներին՝ զազաններին կեր դառնալու համար»), **բերդակ** («փոքր բերդ»), **ճամբար** («պատերազմական բանակ, նրանց բնակվելու տեղը, կայսն»):

ե) Վիճակ, դրություն, հատկանիշ, վերաբերմունք, զգացմունք՝ **չորեքձայնեան** («քառաձայն»), **նախանձանք** («նախանձանություն»), **ձեռքածզութիւն** («ձեռքով նետելը»), **ծաղկացու** («ծաղիկ տվոր»), **յարելուքիւն** («հարելլ, միանալը»), **հաւայ** («ցանկություն», «ձգուում»), **պոռորքաբան** («քամք ձայնով խոսող»), **բնակագոյն** («բնիկ, հարազատ»), **շաւառուն** («եղեգով պատված»), **ճապաղուած** («ցիրուցան»), **պերոզական** («Պերոզի հատկանիշները կրող»), **սրբածունց** («բնաջնջված»), **ճապաղական** («ցիրուցան»), **ռշտունական** («ռշտունիների նման»), **դժկուուն** («դժընդակ»), **կասրիական** («կասպերի նման»), **պատկերածոխ** («փառահեղ արտարինով»), **երդաւոր** («տան մեջ բնակվող»), **արեթածին** («Արեթից ծնված»), **փաղանգփաղանիք** («կույտ-կույտ»), **բռնաբարայն** («քռնորեն»), **մարդափրաբար** («մարդկայնորեն»), **ունդունայն** («ընդունայն»), **սկայօրէն** («հսկայական»), **ցամաք** («պիրկ, ձիգ»):

զ) Ծարժում, ընթացք՝ **գրուցակարգել** («պատմել»), **բոցացուցանել** («բռնկեցնել»), **պատուարել** («պատով պատել»), **գիտութիւն առնել** («տեղեկանալ»), **այրընտիր և ձիրնտիր առնել** («քաջ ձիավոր զորք ունենալ»), **ի վեր ելանել** («բացահայտել»), **ծայրս հարկանել** («ծագել, արկի մասին»), **աստուածակարծեալ** («ինքն իրեն Աստված կարծող»), **ձիահեծեալ** («ձի հեծած»), **փահեծեալ** («փիդ հեծած»), **միհրացեալ** («Միհր դարձած, արեգակի երկրպագու»), **անդրանկեալ** («առաջնը եղած»), **չաստուածացեալ** («ինքն իրեն Աստված դարձրած»), **ճաշակող** («ճաշակող»), **յուղարկուուն** («ուղարկելը»), **ասացելումն** («ասելը»), **գաղթեցումն** («գաղթելը»), **տեսանելումն** («տեսնելը»), **պատճառումն** («պատճառելը»):

է) Իրի անոններ՝ **բահդակ** («դահլիճի կահավորանքի ինչ-որ մաս»), **շազոյր** («վարագույր»), **մաշկապերճան** («պարսից կանացից վրան»):

ը) Հագուստ՝ **հանդերձագին** («արքունի զգեստ»):

թ) Կենդանանուններ՝ **յանկումուխ** («անվարժ ձի»):

Սեբեոսի գործածած նորակազմությունների գերակշռող մասը ստեղծվել է հայերենի բառակազմական կաղապարների գործադրումով, իսկ նորամուտ բառերի մի մասը, ինչպես տեսանք, փոխառություն է հարեւան լեզուներից: Նա նոր բառեր է փոխառել պահլավերենից, հունարենից, ասորերենից, լատիներենից: Այդ փոխառությունները շատ արժեքավոր են, քանի որ արտացոլում են VII դարի Հայաստանում տեղի ունեցած հասարակական-քաղաքական տեղաշարժերն ու իրադարձությունները: Ընդ որում, օրինաչափ է նման փոխառությունների գործածությունը, քանի որ այդ ժամանակահատվածում հայերը պատմական իրադարձությունների

⁷ «Վաճառ փոքր»-ը բառակապակցությամբ արտահայտված իմաստային նորաբանություն է, որի մասին խոսում է Գևորգ Բաղդիշյանն իր «Սեբեոսի լեզուն և ոճը» աշխատության մեջ (Հայոց լեզվի պատմության հարցեր, Եր., 1981, էջ 19-25):

թերումով, հասարակական-քաղաքական, մշակութային գործուների թելադրանքով անընդհատ շփումների մեջ են եղել հարևան ժողովուրդների հետ: Ստորև կրերենք այդ միավորները:

ա) **Պահլավերենից փոխառություններ՝ պէշոպա, պաղգոսապան, շահրմար, ճամբար, փայքար, մաշկապերձան:**

բ) Հունարենից փոխառություններ՝ **սպաթար, կիւնիկ, դրունգար:**

գ) Ասորերենից փոխառություններ՝ **սնդր, բանկանգար:**

Սեբեոսի գործածած փոխառություններից երեքը ոչ անմիջական ճանապարհով են հայերենին անցել, այսինքն՝ միջնորդավորված փոխառություններ են, ինչպես՝ հունարենի միջնորդությամբ հայերենին անցած լատիներեն կուրատոր, կանտիտաս բառերը և պարսկերենի միջնորդությամբ փոխառված արաբերեն հաւայ բառը: Կարելի ասել, որ Սեբեոսը թերել է հետևյալ ձևահմաստային լիակատար նորաբանությունները, որոնց արտահայտած իմաստների համարժեքները գործնականում չեն եղել հայերենում, այն է՝ **դրունգար** («բյուզանդական զինվորական աստիճան»), **կիւնիկ** («կրկեսի հրապարակ», որը գցում էին դատապարտյալներին՝ զագանեցիկ կեր դառնալու համար»), **կուրատոր** («բյուզանդական բարձրաստիճան պաշտոնյա», իսկ մնացյալ փոխառությունները՝ **կանտիտաս, հաւայ, ճամբար, մաշկապերձան, շահրմար, պաղգոսապան, պէշոպա, սնդր, սպաթար, փայքար, կարելի** և միայն հնչյունական մակարդակում համարել նորաբանություն, քանի որ նոր իրողություն, հասկացություն չեն արտահայտում:

Պատմիչի երկում կան նաև այնպիսի նորակազմություններ, որոնց բաղադրիչներից մեկը փոխառություն է, իսկ մյուսը՝ հայերենի հիմնական կամ երկրորդական բառակազմական ձևույթ, ինչպես՝ «Բահլ քաղաքում շինված պատերազմական զրահ» նշանակությունն արտահայտող **բահլիկ** բառը, ուր -իկ վերջածանցն ավելացել է Բահլ տեղանվանը, **դարիքպետ** բառը կազմված է «դարեկի՝ արքունի գործեր» և «պէտ» արմատներից, որը ստուգաբանել է հայագետ Յ. Մարկվարտը⁸, **շահրայնապետ** բառն էլ, որի բաղադրիչների համաստային կողմին անդրադարձել ենք վերևում, կազմված է փոխառյալ «շահր», «այեն» և հայերեն «պետ» արմատներից: Սեբեոսի աշխատության նախնական հրատարակություններում ասորերեն բանգար («վաճառական») բառը ներկայացվել է **բանկանգար** տարբերակով, որը հիմք է տվել բառարանագիրներին այն համարել նորաբանություն: Սակայն պատմիչի քննական բնագրում ճշգրտվում է բառարանագիրների սխալ մեկնաբանությունը, քանի որ **բանկանգար-ը բանգար** բառի աղավաղված տարբերակն է⁹:

Սեբեոսի ստեղծած նորակազմությունները հիմնականում համադրական բարություններ են: Բառարարդման դեպքում գործուն է իսկական բարդության կաղապարը: Այն սերող ու բաղադրող հիմքերում դրսնորվում է խոսքամասային բազմազանությամբ՝ ձևափորվելով ա հոդակապով կամ առանց դրա, ինչպես՝ (ա) գոյական-գոյական՝ **հանդերձագին**, **ձորաքերան**, **դարիքպետ**, **պաղգոսապան**, **շահրայնապետ**, **յանկումուղի**, բ) գոյական-բայարմատ՝ **նախանձաբեր**, **աբերածին**, գ) մակրայ-բայարմատ՝ **շրջեկ**, դ) ածական-գոյական՝ **պոռորքաբան**, ե) գոյական-ածական՝ **պատկերաճոխ**, զ) թվական-գոյական՝ **չորեքձայնեան**, է) ածական-ածական՝ **սրբաջուն**:

Ածանցման դեպքում զգալի կշիռ ունի վերջածանցման կաղապարը:

⁸ Տե՛ս «Պատմութիւն Սեբեոսի», Եր., 1979, էջ 298:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 301:

Ըստ վիճակագրության՝ հաստկապես նկատելի է բայանվանակերտ -ումն վերցածանցի միջոցով նոր բառեր կազմելու միտումը, այն է՝ **ասացելումն**, **գաղքեցումն**, **տեսամելումն**, **մարդումն**, **պատճառումն**, **յուղարկումն**: Ածականակերտ -ական վերջածանցը հանդիպում է մի քանի նորակերտումներում, այն է՝ **պերոզական**, **ճապաղական**, **ոշտունական**, **կարիխական**: Գոյականական -ուրիշն ածանցը հանդիպում է երկու վկայության մեջ, ինչպես՝ **ձեռքաձգութիւն**, **յարելութիւն**: Մյուս գոյականակերտ, բայանվանակերտ, ածականակերտ և մակրայակերտ վերջածանցների միջոցով պատմիչը ստեղծել է մեկական բառ, այն է՝ **կողածք** (ածք), **սրիան** (ան), **բահիկ** (իկ), **տարտնացի** (ացի), **նախանձանք** (անք), **ծաղկացու** (ացու), **բնակագոյն** (ագոյն), **շատառուն** (ուն), **ճապաղուած** (ուած), **դժկոտ** (կոտ), **երդաւոր** (աւոր), **ճաշակող** (ող), **բռնաբարայն** (այն), **մարդասիրաբար** (աբար), **սկայորեն** (օրէն), **բերդակ** (ակ): Պատմիչն ընդամենքը մի նախածանցավոր նորակազմություն է ստեղծել, այն է՝ **անհրամանատար** (ան): Պատմիչի նորակազմությունների բվին են պատկանում նաև հարադրական բարդության մեջ մտնող մի քանի հարադրական բայեր ու ընդամենք մեկ կրկնավոր բարդություն, ինչպես՝ **այրընտիր** և **ձիրնտիր** առնել, **գիտութիւն** առնել, **ի վեր ելանել**, **ծայրս հարկանել**, **փաղանգ-փաղանց**:

Ինչ վերաբերում է Սեբեոսի գործածած նոր բառային միավորների խոսքանասային պատկանելությանը՝ փաստենք, որ գերակշիռ են գոյականներն ու ածականները, որոնց զիջում են բայերն ու մակրայները:

Հարկ ենք համարում ստորև աղյուսակով տալ Սեբեոսի երկում առկա նորամուտ բառերը՝ ըստ գրաբարյան բառաշերտերը ներկայացնող բացատրական բառարաններում դրանց վկայելու ժամանակային հաջորդականության:

Առեւն բառարան, Վենտիկ, 1865	Դ. Աճայան, Նայերեն արմատական բառարան, հ. Ա-է, Եր., 1927-1935	Ս. Մայմասյանց, Նայերեն բացատրական բառարան, հ. 1-4, Եր. 1944-1945	Ռ. Ղազարյան. Գրաբարի բառարան, հ. 1- 2, Եր., 2000	Ռ. Ղազարյան և Դ. Ավետիսյան, Նորահայտ բառեր գրաբարում, Եր., 2007	Որմէ բառարանում չկայված նորակազմու- թյուններ
այրընտիր և ձիրնտիր առնել	բակիկ	բահդալ	ձեռքաձգութիւն	աբերածին	ասացելումն
անհրամանատար սասուսակարծեա	դրունգար	հանդերձագին	ճապաղուած	անդրանկեալ	գաղթեցումն
բերումկ բոցաղուցանել ընարաբարյան	կամսիտսատ	ձորաքերամ	յանկումուսի	բնակագոյն	դարիքան
դժկոտ երդաւոր զրուցակարգել	կիւմիկ	ճապաղական	պոռշաբան	գիտութիւն առնել	կարիխական
ծոտկացու կողածք	կուրասոր	չաստուածնեալ	վաճառ փոքր	ի վեր եւանել	ճաշակող
ծոահեծեալ ճամբըր մաշկապերճան	հաւայ	փողահեծեալ	փաղանգ- փաղանգ	ծայրս հարկանել	յուղակումն
ճարդասիրաբար միհրացեալ	շաւառուն		փայքար	նախանձարեր	շահրայնապետ
յարելութիւն	պագոսսապան			նախանձարեր	շրջեկ
շագոյր չորեծանեան պատկրածին	պէշոպա			նուածեցուցանել	պատճառումն
պասուարել սպասազար	սնդր			սկայօրէն	պերոզական
սպաբար	սրիան			ունդունայն	ոշտունական
սրբաջումք	ցանաք				տարտնացի տեսանելումն

Ամփոփելով Սեբեոսի «Պատմութեան» լեզվում արտացոլված նորամուտ բառերի իմաստային, ծագումնաբանական, բառակազմական և խոսքամասային ա-

ռանձնահատկություններին նվիրված մեր դիտողությունները՝ փաստենք, որ քննարկված շուրջ 75 նորամուտ բառերն ուշագրավ են հետևյալ առումներով.

ա) Սերենսի բառային նորամուծությունները միշտ եղել են հետազոտողների ուշադրության կենտրոնում:

բ) Սերենսի սույն բառաշերտը լավագույնս բնութագրում է 7-րդ դարում հայ ժողովրդի հետ տեղի ունեցած հասարակական, քաղաքական և մշակութային փոփոխական գործընթացները, այդ թվում՝ հայերի ու հարևան ժողովուրդների միջև ծավալված իրադարձություններն ու փոխհարաբերությունները:

գ) Սերենսի լեզվի այս շերտն ըստ արժանվույն ընդգծում է պատմիչ-մտածողի մտքի ճկունությունը և պատմագիտական հայացքները:

Г. Г. МКРТЧЯН – *Неологизмы в “Истории” Себеоса*. – Статья посвящена анализу неологизмов в языке труда выдающегося историка VII века Себеоса - “История”. При этом рассмотрены семантические, этимологические, словообразовательные и морфологические особенности использованных Себеосом неологизмов. С применением статистических методов удается установить, насколько добросовестны были лексикографы, интересующиеся лексикой грабара, при отражении особенностей лексического запаса историка. В итоге автором статьи выяснено, что ни один из лексикографов не отразил в своем словаре более десятка принадлежащих Себеосу неологизмов.